ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Ադրբեջանի պետական կառավարման և տնտեսական համակարգերի ամփոփ համապատկերը» կոլեկտիվ մենագրության հրատարակությունը երաշխավորելու** մասին հարցը (հրատարակության է ներկայացրել «Ամբերդ» հետազոտական կենտրոնը):

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից հրատարակության ներկայացված կոլեկտիվ մենագրությունը եզակի և բացառիկ նշանակություն ունի Ադրբեջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացները ճանաչելու, ինչպես նաև տարածաշրջանային հնարավորությունների և սպասվելիք վտանգների բացահայտման տեսանկյունից: Այն յուրօրինակ մեկնարկ է Ադրբեջանի պետական կառավարման համակարգի, տնտեսության ներկա վիճակի, թույլ և ուժեղ կողմերի, տնտեսական ներուժի վերաբերյալ հետազոտությունների ընդլայնման համար:

Կոլեկտիվ մենագրության վերաբերյալ ստացվել է մեկ արտաքին և մեկ ներքին գրախոսների դրական կարծիքներ.

1. Մարգարիտ Աշոտի Պետրոսյան՝ քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ:
2. Տիգրան Սերյոժայի Մարտիրոսյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտության բաժնի պետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Բոլոր կարծիքներում նշվում է. հրատարակության ներկայացված կոլեկտիվ մենագրությունն առանձնանում է Ադրբեջանի պետական կառավարման և տնտեսության վերաբերյալ համակողմանի ուսումնասիրություն կատարելու հրատապությամբ, յուրօրինակությամբ, խորությամբ, կատարված վերլուծությունների ու եզրակացությունների ինքնատիպությամբ, ամրագրված տեղեկատվության արժեքավորությամբ:

Կոլեկտիվ մենագրությունը երաշխավորվել է հրատարակության գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 14-ի նիստում (արձանագրություն N 6):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով մեկ արտաքին և մեկ ներքին գրախոսների դրական կարծիքները և գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի նիստի որոշումը՝ **«Ադրբեջանի պետական կառավարման և տնտեսական համակարգերի ամփոփ համապատկերը» կոլեկտիվ մենագրությունը երաշխավորել հրատարակության**:

Սահմանված ժամկետում (ժամը 9:00-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում) հարցման կարգով նիստի օրակարգային հարցի քննարկմանն ու քվեարկությանը գիտական խորհրդի 60 անդամից մասնակցեցին 54-ը: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. հունիսի 24
Երևան